ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» Դեկտեմբեր 2025 թ. N 47-Ա/1

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՎԱՍԱՅԼԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 60-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել պետական հավաստագրի հիման վրա անվասայլակ տրամադրելու ցուցումների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի հավելվածի 6-րդ սյունակով սահմանված Ֆունկցիաների Միջազգային Դասակարգման (այսուհետ՝ ՖՄԴ) ծածկագրերն ունեն ուղղորդիչ բնույթ: Անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետները կարող են կիրառել նաև այլ ծածկագրեր՝ հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը: Ուղղորդիչ ծածկագրերը հաշվի չեն առնվում այն դեպքերում, եթե անձը աջակցող միջոցն ստանում է վերականգնողական անհատական ծրագրերի կամ 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման N 1 հավելվածի N 4 ձևով հաստատված տեղեկանքի հիման վրա:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Միասնական սոցիալական ծառայության պետին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի կիրառումը Միասնական սոցիալական ծառայության համապատասխան ստորաբաժանումների կողմից:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի ապրիլի 25-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց անվասայլակ տրամադրելու ցուցումների և հակացուցումների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005 թվականի ապրիլի 12-ի N 45-Ա/1 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 60-Ա/1 հրամանը:

5/15/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890604

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2025 թվականի մայիսի 15-ի N 47-Ա/հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՆՎԱՍԱՅԼԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Լրացնող միջոցի անվանումը	Աջակցող միջոցի նկարագրությունը	Կիրառելի է/ Ցուցումներ	Կիրառելի չէ/ Հակացուցումներ	Օգտագործման ժամկետը	ՖՄԴ ծածկագրերը և որակիչները
1	2	3	4	5	6
I.ԱՆՎԱՍԱՅԼԱԿ ՍՈՎՈՐԱԿԱՆ	Անիվներով ծալովի սայլակ, նախատեսված է երեխաների կամ մեծահասակների համար, ովքեր ի վիճակի չեն քայլել, բայց կարող են ուղիղ նստել և պահել հավասարակշռությունը առանց լրացուցիչ աջակցության, կարճաժամկետ օգտագործման համար ներսում և դրսում: Օգտագործվում է ինքնուրույն կամ ուղեկցող անձի օգնությամբ:	1. նյարդային համակարգի հիվանդություններ (G00 – G99). 2. ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ (M00-M99). 3. վնասվածքներ (S00 – S99):	1. 100 կգ-ից ավել քաշ ունեցող անձանց. 2. b110՝ գիտակցության ֆունկցիայի (էպիլեպսիա) 3,4 որակիչների դեպքում:	1. 0-15 տարեկան (ներառյալ) երեխաներին՝ 2 (երկու) տարի. 2. 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց՝ 3 (երեք) տարի:	b730 Մկանային ուժի ֆունկցիա՝ զույգ վերին վերջույթներում 0,1,2,3,4, ստորին վերջույթներում 3,4 b735 Մկանային տոնուսի ֆունկցիան զույգ վերին վերջույթներում 0,1,2,3,4 ստորին վերջույթներում 3,4 b770 Քայլվածքի ձևի ֆունկցիա 3.4 կամ s750 Ստորին վերջույթների կառուցվածք 2.3. 4 d415. Մարմնի դիրքը պահպանելը 1, 2, 3, 4 d420 Տեղափոխվելը 1,2,3,4 d450 Քայլելը 3,4 d455 Տեղաշարժվելը 3,4 d460 Տարբեր վայրերում տեղաշարժվելը 3,4 d465. Սարքավորումների օգնությամբ տեղաշարժվելը 0,1,2,3 d.470 Փոխադրամիջոցից օգտվելը. 3,4

. ԱՆՎԱՍԱՅԼԱԿ՝ ՄԱՆԿԱԿԱՆ ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԱԹՎԱԾ, ԵՐԳԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՍԿՈԼԻՈԶ ՈՒՆԵՑՈՂ ԼՆՋԱՆՑ ՀԱՄԱՐ	Նախատեսված է կեցվածքի կամ դիրքավորման հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, որը պահանջում է փոփոխական թեքություն, կամ ստատիկ թեքման ավելի մեծ տիրույթ, քան հասանելի է ձեռքով սայլակների դեպքում: Նախատեսված է ինչպես փակ, այնպես էլ անհարթ քաղաքային, մերձքաղաքային և գյուղական բացօթյա միջավայրերում օգտագործման համար: Օգտագործվում է ինքնուրույն կամ ուղեկցող անձի օգնությամբ:	1. նյարդային համակարգի հիվանդություններ (G00 – G99). 1) ողնուղեղի, վնասվածքներ, 2) մկանային դիստրոֆիա, 3) ցրված սկլերոզ, 4)ամիոտրոֆիկ կողային սկլերոզ, 5) Էլերս-Դանլոսի համախտանիշ, 6) ուղեղի տրավմատիկ վնասվածք, 7) սկոլիոզ, 8) կաթված: 2.Գերգիրություն:	1. b110-գիտակցության ֆունկցիայի (էպիլեպսիա) 3,4 որակիչների դեպքում:	1. 0-15 տարեկան (ներառյալ) երեխաներին՝ 2 (երկու) տարի. 2. 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց՝ 3 (երեք) տարի:	b730 Մկանային ուժի ֆունկցիա 3.4 b770 Քայլվածքի ձևի ֆունկցիա 3.4 կամ b350 քաշի պահպանման ֆունկցիաներ 4 կամ s760 իրանի կառուցվածք 4 d.410. Մարմնի հիմնական դիրքը փոխել 3,4 d.415. Մարմնի դիրքը պահպանելը 2.3.4 d.420. Տեղափոխվելը 4 d.450. Քայլելը 3,4 d.455. Տեղաշարժվելը 3,4 d.460. Տարբեր վայրերում տեղաշարժվելը 4 d.470 Փոխադրամիջոցից օգտվելը. 3,4
3. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱՆՎԱՍԱՅԼԱԿ	Էլեկտրական շարժիչներով սնվող անիվներով սայլակ: Օգտագործվում է այն անհատների կողմից, ովքեր դժվարանում են տեղաշարժվել ձեռքի կառավարման (մանուալ) սայլակով:	1. նյարդային համակարգի հիվանդություններ (G00 – G99). 2. վնասվածքներ (S00 – S99):	1. b110-գիտակցության-(էպիլեպսիա) 2,3,4. 2. b114-Կողմնորոշման 2,3,4. 3.b117- իտելեկտի 3,4. 4.b144 -հիշողության 2,3,4. 5.b140-ուշադրություն	16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց՝ 5 (հինգ) տարի	b730 Մկանային ուժի ֆունկցիա զույգ վերին վերջույթներում 0,1,2,3 b735 Մկանային տոնուսի ֆունկցիա զույգ վերին վերջույթներում 0,1,2,3, b770 Քայլվածքի ձևի ֆունկցիա 4 s750 Ստորին վերջույթների կառուցվածք 4 d.440 Դաստակի նուրբ շարժումներ կատարելը 0.1.2,3 d.450. Քայլելը 4

			2.3.4 և այլ. 6.Տեսողության և լսողության ֆունկցիայի խանգարումներ b210-3.4 b230-3.4. 7. Զույգ վերին վերջույթների ֆունկցիայի խորը խանգարումներ:		d.455. Տեղաշարժվելը 4 d.460. Տարբեր վայրերում տեղաշարժվելը 4 d.465. Սարքավորումների օգնությամբ տեղաշարժվելը 1,2,3